ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N **Վ**/62-2025

ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

02 ապրիլ 2025 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝ Վարչապետ (խորհրդի նախագահ)	Ն. Փաշինյան
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ (Խորհրդի անդամներ)՝	
Բարձրագույն դատական խորհրդի նախագահ	Ա. Աթաբեկյան
Փոխվարչապետ	Մ. Գրիգորյան
Վարչապետի աշխատակազմի ղեկավար	Ա. Հարությունյան
Արդարադատության նախարար	Ս. Գալյան
Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	Վ. Վարդանյան
Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ	Ռ. Բաքոյան
Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար	Ա. Հովհաննիսյան
Վճռաբեկ դատարանի նախագահ	Լ. Թադևոսյան
Գլխավոր դատախազ	Ա. Վարդապետյան
Քննչական կոմիտեի նախագահ	Ա. Պողոսյան
Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ	Ա. Նահապետյան
Մարդու իրավունքների պաշտպան	Ա. Մանասյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող	Մ. Գալստյան
Պետական վերահսկողական ծառայության ղեկավար	Ռ. Պետրոսյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Գ. Քոչարյան
Խորհրդի անդամ հասարակական կազմակերպություններ՝	
«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն	Ա. Ղազարյան
«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն	Ս. Այվազյան
«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար	Ա. Սաքունց
«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության փոխնախագահ	Մ. Ատովմյան
«Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող	Դ. Իոաննիսյան

Խորհրդի հրավիրյալ մասնակիցներ՝	
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ	Լ. Ալեքսանյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ	Ա. Փաշինյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ	Ա. Մարուխյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Ա. Կարապետյան
Արդարադատության նախարարի խորհրդական	Ն. Զեյնալյան
Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ	Ե. Կարապետյան
Վարչապետի աշխատակազմի «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության համակարգող	Լ. Աֆրիկյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրակարգային հարց

Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում իրականացված աշխատանքների ներկայացում

1. **Նիստը բացեց՝** Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) նախագահը՝ ներկայացնելով քննարկման ենթակա հարցը, առաջարկեց, որ քննարկվող հարցի վերաբերյալ զեկույցով հանդես գա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) նախագահի պարտականություններ կատարող Մ. Գալստյանը: Խորհրդի նախագահի կողմից սահմանվեց նիստի անցկացման ընթացակարգը:

2. **Խորհրդի նիստերի օրակարգի ձևավորման հետ կապված ներկայացվեցին հետևյալ դիտարկումները.**

1) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը առաջարկեց սահմանել առաջիկա նիստերի պարբերականությունը՝ նպատակ ունենալով ապահովել գործընթացի շարունակականությունն ու արդյունավետ կազմակերպումը, ինչպես նաև նախապես հստակեցնել օրակարգային հարցերի հաջորդականությունը և դրանց քննարկման առաջնահերթությունները:

2) Արդարադատության նախարար Ս. Գայյանը, ներկայացնելով Վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշմամբ սահմանված Խորհրդի նիստերի անցկացման պարբերականությունը, առաջարկեց Խորհրդի հաջորդ նիստն անցկացնել ըստ նշված իրավական ակտով սահմանված ժամկետների: Նախարարը նշեց, որ Արդարադատության

նախարարությունը դիմել է ինչպես շահագրգիռ կողմերին, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին՝ Խորհրդի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ առաջարկությունները հավաքելու նպատակով: Նշվեց, որ հաջորդող նիստի օրակարգը վերոգրյալ առաջարկությունների հիման վրա արդեն պատրաստ է և հավելյալ կշրջանառվի:

3) Խորհրդի նախագահը հանդես եկավ արտագնա նիստ անցկացնելու առաջարկով, ինչը հնարավորություն կընձեռի արդյունավետ կերպով քննարկել գումարվող հերթական նիստի օրակարգում ներառվող հարցերը: Համատեղ քննարկումների արդյունքում որոշվեց, որ Խորհրդի հաջորդ նիստը կկայանա 2025 թվականի հունիսի 14-ին:

3. **Զեկույցով հանդես եկավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մ. Գալստյանը.**

1) Ներկայացրեց Հանձնաժողովի կողմից 2024 թվականի ընթացքում կոռուպցիայի կանխարգելման ոլորտում իրականացված աշխատանքները, մասնավորապես կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգում պիլոտային մեթոդաբանությունների գործարկման արդյունքները, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների բարեվարքության համակարգում իրականացված բարեփոխումները, բարեվարքության ուսումնասիրության համակարգում օրենսդրական փաթեթի ընդունման և դրա հետ կապված ընդհանուր միտումները և 2024 թվականի ընթացքում իրականացված բարեվարքության ուսումնասիրությունների և բարեվարքության ընթացիկ ուսումնասիրությունների արդյունքները:

2) Միաժամանակ ներկայացրեց հայտարարագրերի վերլուծությունների, դրանց ներկայացման գործընթացի նկատմամբ իրականացված վերահսկողության և վարչարարության արդյունքները և միտումները, ինչպես նաև անդրադարձ կատարեց կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության վերահսկողության ուղղությամբ իրականացված՝ 2024 թվականին ձևավորված իրավակիրառ պրակտիկայի արդյունքներին և դրանցից բխող օրենսդրական փոփոխություններին:

3) Ներկայացրեց նաև Հանձնաժողովի գործունեությունն ամբողջապես թվայնացնելու, վերլուծական մոդուլների ներդրմամբ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու տեսլականը, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

4. **Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները՝**

1) Վարչապետի աշխատակազմի ղեկավար Ա. Հարությունյանը անդրադարձ կատարեց հայտարարագրերի կատարելագործմանը և թվայնացմանը, ինչպես նաև պաշտոնատար անձանց՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցության հավատարմագրային կառավարման առկա խնդիրներին: Միաժամանակ, անդրադարձ կատարվեց հայտարարագրերի հրապարակման հետևանքով մամուլում տեղ գտած տեղեկատվության անճշտություններին՝ առաջարկելով կատարել որոշակի փոփոխություններ և հստակեցնել եկամուտների հասկացությունը՝ հանրային որոշակի տարընկալումներից խուսափելու նպատակով:

Մ. Գալստյանը նշեց, որ առկա է 2011-2021թթ. հայտարարագրերի ռեեստր, ինչպես նաև նախատեսվում է ներդնել նոր համակարգ, որտեղ կգեներացվեն նաև այդ ժամանակահատվածի վերաբերող տեղեկատվությունը: Անդրադարձ կատարեց հայտարարագրերի շրջանակներում հրապարակվող տեղեկատվության վերաբերյալ հարցին: Ներկայացրեց հավատարմագրային կառավարման ոլորտում առկա խնդիրները և հնարավոր լուծումները:

2) Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ.Վարդանյանը անդրադարձ կատարեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրվող բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների տեսակներին, բարեվարքության եզրակացության եզրափակիչ մասում ներառվող տեղեկատվության շրջանակին:

Մ. Գալստյանը մեկնաբանեց բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների տեսակների վերաբերյալ նախկին և ներկա կարգավորումները, իրականացված փոփոխություններով գործող կառուցակարգերը: Հավելեց նաև, որ եզրակացությունների եզրափակիչ մասը, բացի դրական կամ բացասական գնահատման վերաբերյալ նշումից պարունակում է տվյալներ դրական կամ բացասական գնահատման համար հիմք հանդիսացած հանգամանքների վերաբերյալ:

3) Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Ա. Հովհաննիսյանը, անդրադարձավ բարեվարքության ուսումնասիրության արդյունքում տրվող բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների եզրափակիչ մասի հրապարակայնությանը:

Մ. Գալստյանը նշեց, որ այս ինստիտուտը հնարավորություն է տալիս պետական պաշտոնների համալրումն իրականացնել բարեվարք անձանցով, ինչպես նաև կառավարելի է դարձում շահերի բախման և բարեվարքության համակարգի տարրերին առնչվող առկա ռիսկերը տվյալ մարմինների կողմից: Եզրակացությունների եզրափակիչ մասի հրապարակայնության մասով, նշվեց որ դա կարևոր է Հանձնաժողովի գործունեության թափանցիկության և հանրային հաշվետվողականության տեսանկյունից:

4) Արդարադատության նախարար Ս. Գալյանը անդրադարձ կատարեց փաստացի տիրապետվող գույքի չհայտարարագրման դեպքերին, հավելեց նաև, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների միջոցով հնարավոր է ստուգել քրեական ենթամշակույթին հարելու հանգամանքը: Միաժամանակ, անդրադարձ կատարեց բարեվարքության եզրակացությունների եզրափակիչ մասի հրապարակայնության խնդրին, ներկայացրեց այս խնդրի լուծմանն ուղղված և Արդարադատության նախարարության կողմից մշակված նախագծով առաջարկվող լուծումները:

Մ. Գալստյանը նշեց, որ գործնականում հանդիպում են անձի փաստացի գույքի չհայտարարագրման դեպքեր, հավելեց նաև, որ քրեական ենթամշակույթին հարելու հանգամանքի, ինչպես նաև գույքի փաստացի տիրապետման հետ կապված Հանձնաժողովը մշտապես դիմում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, որոնց կողմից տրամադրված տվյալների միջոցով է կարողանում գնահատել քրեական ենթամշակույթին հարելու, ինչպես նաև գույքի փաստացի տիրապետման հանգամանքները:

5) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դ. Իոաննիսյանը խնդրեց հստակեցնել այն պաշտոնատար անձանց շրջանակը, ովքեր, խախտելով անհամատեղելիության պահանջները, դեռևս շարունակում են պաշտոնավարել: Անդրադարձ կատարեց կուսակցությունների ֆինանսավորման հետ կապված խախտումների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից արձանագրված բացահայտումների արդյունքում հարուցված քրեական վարույթների ընթացքին, ինչպես նաև բարեվարքության եզրակացություն տրամադրելիս քրեական ենթամշակույթին հարելու ստուգման առկա մեխանիզմներին:

Մ.Գալստյանը արձագանքեց նշելով, որ քրեական ենթամշակույթին հարելու հետ կապված տեղեկատվությունը Հանձնաժողովը ստանում է իրավապահ մարմիններից և ՁԼՄ-ների

հրապարակումներից: Ինչ վերաբերում է կուսակցությունների ֆինանսավորման հետ կապված վարույթներին, նշվեց, որ որոշ վարույթներ կարճվել են, ինչպես նաև առկա են վարույթներ, որոնք դեռևս գտնվում են դատական քննության փուլում:

6) «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար Ա. Սաքունցն անդրադարձավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պաշտոնը տևական ժամանակ թափուր մնալու հանգամանքին, ինչպես նաև առաջարկեց վեր հանել բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացության առկայության դեպքում անձին պաշտոնի նշանակելու պատճառները, հետաքրքրվեց բարեվարքության գնահատման մեջ մարդու իրավունքների խախտման փաստերը՝ որպես գնահատման ցուցանիշ դիտարկվելու հանգամանքին:

Մ. Գալստյանը նշեց, որ Հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրություն չիրականացնելը պայմանավորված է Հանձնաժողովի անդամի պաշտոնի թափուր լինելու հանգամանքով և նպատակահարմար է Հանձնաժողովի նախագահի ընտրությունն իրականացնել բոլոր անդամների նշանակվելուց հետո, ինչը կապահովի գործընթացի ներառականությունը: Բացի այդ, նշեց որ բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը կրում է խորհրդատվական բնույթ և նշանակող մարմինն է որոշում թեկնածուին պաշտոնի նշանակելու հարցը: Նշեց նաև, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքով նախորդ տարի իրականացված փոփոխություններով հստակ սահմանվել են Հանձնաժողովի կողմից բացասական եզրակացություն տրամադրելու դեպքերը:

Միաժամանակ նշեց, որ մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որով նախատեսվում է հրապարակել բարեվարքության եզրակացության եզրափակիչ մաս, որը հնարավորություն կտա ապահովել գործընթացի հաշվետվողականությունը:

7) «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Ս.Այվազյանը հարց բարձրացրեց Հանձնաժողովի նախագահի պաշտոնի թափուր լինելու հանգամանքի, Հանձնաժողովում կադրերի հոսունության հնարավոր պատճառների, Կառավարության կողմից Հանձնաժողովին ֆինանսավորելու, և կուսակցությունների ֆինանսավորման ստուգման մեխանիզմների վերաբերյալ:

Մ. Գալստյանը անդրադարձավ կադրերի հոսունության, Հանձնաժողովի աշխատակիցների վարձատրության խնդիրներին, նշեց, որ ներկայումս Կառավարության հետ քննարկվում է Հանձնաժողովի ֆինանսավորման հարցերը:

8) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դ. Իոաննիսյանը առաջարկեց մշակել բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների գնահատման մեթոդական ձեռնարկ, որպեսզի մյուս մարմինները կարողանան ճիշտ ձևով գնահատեն թեկնածուներին պաշտոնի նշանակելու իրավաչափության հարցը:

9) Քննչական կոմիտեի նախագահ Ա.Պողոսյանը իր մտահոգություններն արտահայտեց գնահատման մեթոդաբանության չափորոշիչների հետ կապված, ինչպես նաև առաջարկեց ուշադրություն դարձնել վարույթների կարճման հիմքերին:

5. **Ելույթներով հանդես եկան.**

1) Փոխվարչապետ Մ.Գրիգորյանը կարևորեց Հանձնաժողովի դերը պետական մարմինների համակարգում՝ առաջարկելով շեշտադրումը դնել թվայնացման գործընթացի կատարելագործման վրա: Միաժամանակ նշեց, որ Կառավարության առաջնահերթություններից է համարվում Հանձնաժողովի գործունեության ամբողջական թվայնացումը, որպեսզի առաջիկայում հնարավորինս նվազեցվի մարդկային գործոնը:

2) Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ.Վարդանյանը ներկայացրեց բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության եզրափակիչ մասը հրապարակային դարձնելու ռիսկերը:

3) Արդարադատության նախարար Ս.Գալյանը անդրադարձ կատարեց վերջին օրենսդրական փոփոխություններով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության և նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների վերահսկողության բարեփոխված կառուցակարգերին, ինչպես նաև առաջարկեց կատարելագործել Քրեական օրենսգրքի 442-րդ հոդվածի (Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը) քննության մեթոդիկան: Նշեց նաև, որ կարևոր է լոբբիստական գործունեության կառուցակարգերի ներդրումը Հայաստանի Հանրապետությունում, որն ամրագրվել է 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարությամբ:

Բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների եզրափակիչ մասի հրապարակայնության հետ կապված խնդիրները քննարկելու նպատակով առաջարկեց շահագրգիռ մարմինների հետ կազմակերպել համապատասխան քննարկում:

4) «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն Ա.Ղազարյանը կարևորեց կուսակցություններին նվիրատվության չափաբաժնի բարձրացումը, կուսակցությունների կողմից նախընտրական հիմնադրամների ֆինանսավորման հնարավորության նախատեսումը, հավատարմագրային կառավարման կատարելագործումը, լոբբինգի ինստիտուտի ներդրումը:

5) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դ. Իոաննիսյանը առաջարկեց կատարելագործել հավատարմագրային կառավարման ինստիտուտը, քրեական ենթամշակույթի գնահատման կառուցակարգերը: Առաջարկեց հրապարակել Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջի խախտման որոշումները, բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների եզրափակիչ մասը:

6) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մ.Գալստյանը հանդես եկավ եզրափակիչ ելույթով:

7) Խորհրդի Նախագահը հանդես եկավ եզրափակիչ ելույթով և հայտարարեց, որ Խորհրդի հաջորդ նիստը տեղի կունենա 2025 թվականի հունիսի 14-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՄՀԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ